ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 169-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
3.Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

11. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

12. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

13. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

14. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

15. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

16. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 76/5 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 22.1քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

17. Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 76/11 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 40.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

18. Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/3 հասցեի 71.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

19. Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/4 հասցեի 43.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

20. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

21. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1670.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 170-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013թվականի հունիսի 27-ի թիվ 661-Ն և 2013 թվականի հուլիսի 18-ի թիվ 781-Ն որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 287 որոշմամբ հաստատված համայնքի 2013 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 4640 դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013 թվականի վարչական բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 1խումբ 3 դաս3) հոդված 4212 ծախսերն ավելացնել 4640 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 171-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցի թիվ 25 հասցեի տանը հարակից հենապատի վերակառուցման և Կամարինի փողոցի թիվ 1 տնից մինչև Կամարինի թիվ 19 տունն ընկած հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգում» աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված աշխատանքների գնում, համաձայն համապատասխան կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ««Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցի թիվ 25 հասցեի տանը հարակից հենապատի վերակառուցման և Կամարինի փողոցի թիվ 1 տնից մինչև Կամարինի թիվ 19 տունն ընկած հատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգման լրացուցիչ աշխատանքների» գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 1229261 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 172-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի դպրոցների տնօրենները, խնդրանքով փոխհատուցել դպրոց հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների՝ թվով 184 երեխաների 2013թ.-2014թ. ուսումնական տարվա դասագրքերի վճարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքի թվով 5 դպրոցներ հաճախող 184 երեխաներին 2013թ.-2014թ. ուսումնական տարվա համար դասագրքերի վճարը փոխհատուցելու նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 875132 դրամ «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» /բաժին 09, խումբ 06 , դաս 01/ 4269 հոդվածին, այդ թվում՝

«Դիլիջանի Ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն– 209592 դրամ,
«Դիլիջանի թիվ 2 դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն– 256380 դրամ,
«Դիլիջանի թիվ 4 դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն– 181460 դրամ,
«Դիլիջանի Վ.Անանյանի անվան դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն – 146740 դրամ,
«Դիլիջանի թիվ 6 դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն– 80960 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 173-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի սկզբնահատվածից մինչև Կալինինի 239 ընկած հատվածի փողոցների մայթերի հիմնանորոգում և գազոնների վերականգնում» աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված աշխատանքների գնում՝ համաձայն համապատասխան կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի սկզբնահատվածից մինչև Կալինինի 239 ընկած հատվածի փողոցների մայթերի հիմնանորոգում և գազոնների վերականգնման լրացուցիչ աշխատանքների» գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 588260 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 174-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի Գետափնյա և Կալինինի փողոցների մայթերի հիմնանորոգում և զազոնների վերականգնում» աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված աշխատանքների գնում՝ համաձայն համապատասխան կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ««Դիլիջան քաղաքի Գետափնյա և Կալինինի փողոցների մայթերի հիմնանորոգում և զազոնների վերականգնման լրացուցիչ աշխատանքների» գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 971860 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 175-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Կալինինի փողոցի բարձրահարկ բնակելի շենքերի բնակիչները՝ նշված շենքերի դռներն ու պատուհանները վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված շենքերի դռներն ու պատուհանները դեռևս Խորհրդային Միության ժամանակներից չեն ենթարկվել վերանորոգման, բնակիչների անհոգի վերաբերմունքի, ինչպես նաև արտաքին ազդեցությունից գրեթե շարքից դուրս են եկել, մասնավորապես ապակիները մեծ մասամբ ջարդված են, մուտքի դռների փայտյա մասերը ՝ փտած:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել շենքերի մուտքերի դռների և միջանցքի պատուհանների վերականգնման նախագծա-նախահաշվային աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի բնակելի շենքերի դռները և պատուհանները փոխելու նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 650000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 176-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Գետափնյա փողոցի բարձրահարկ բնակելի շենքերի բնակիչները՝ շենքերի շքամուտքերը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված շենքերի շքամուտքերը դեռևս Խորհրդային Միության ժամանակներից չեն ենթարկվել վերանորոգման:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել շենքերի շքամուտքերի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի բնակելի շենքերի շքամուտքերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 600000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 177-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Մանթաշյան փողոցի բնակիչները՝ քաղաքի ներհամայնքային նշանակության Մանթաշյան փողոցից մինչև Սայաթ-Նովա փողոց հատման ավտոճանապարհը վերանորոգելու խնդրանքով:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:
Ճանապարհի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Մանթաշյան փողոց .թիվ 1 տնից մինչև Սայաթ-Նովա փողոց հատման ավտոտրանսպորտի երթևեկելի մասի նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 600000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 178-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կամարինի փողոցի բնակիչները՝ հայտնելով, որ Կամարինի փողոցի 1-ին նրբանցքի թիվ 11 հասցեի տան հարակից հենապատը մասամբ փլվել է և անհրաժեշտ է այն վերակառուցել:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված հենապատը տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, փլվածքները լցվել են փողոց, ինչը խոչընդոտ է առաջացնում ավտոտրանսպորտի և հետիոտնի անվտանգ երթևեկության համար: Կարճ ժամկետում վթարված հենապատը վերակառուցելու նպատակով, համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել նշված վայրում կառուցել պաշտպանիչ հենապատ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցի 1-ին նրբանցքի թիվ 11 հասցեի տան հարակից հենապատի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 100000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 179-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Կամո փողոցի բնակիչները՝ Կամո 4 հասցեի տանը հարակից տարածքի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի վերանորոգման խնդրանքով: Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված տարածքը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված հատվածի փոսային նորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կամո 4 հասցեի տանը հարակից տարածքի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգման նախագծանախահաշվային աշխատանքների կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 200000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 180-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 4 քաղաքացիներ՝ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 80000 դրամ, այդ թվում ՝

- ք.Դիլիջան Գայի 31 բն.31 հասցեի բնակիչ Խանում Մանուկյանին – 20000 դրամ
- ք.Դիլիջան Շամախյան 2 Ա բն.7 հասցեի բնակիչ Արտակ Սարգսյանին-20000 դրամ
- ք.Դիլիջան Վասիլև 50 հասցեի բնակիչ Մարտուն Թամրազյանին -20000 դրամ
- ք.Դիլիջան ՈՒսանողական 25 հասցեի բնակիչ Նաիրա Թովմասյանին – 20000 դրամ

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 181-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Մյասնիկյան փողոցի 1-ին նրբ. բնակիչները՝ դեպի գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգման և հենապատի կառուցման խնդրանքով: Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված հենապատը և ճանապարհահատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել են ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարել նշված հատվածի հենապատի և ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի 1-ին նրբ. դեպի գերեզմանատուն տանող ճանապարհի բարեկարգման և հենապատի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքների կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 80000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 182-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Շահումյան փողոցի 1-ին նրբ. բնակիչները՝ ճանապարհի բարեկարգման խնդրանքով:
Ուսումնասիրությամբ պարզվել է , որ նշված ճանապարհը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունների հետևանքով ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կատարելու նշված ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի 1-ին նրբ. ճանապարհի բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքների կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 50000 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 183-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և կատարել հատկացում՝

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/՝
   1) «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» /բաժին 01, խումբ 06, դաս 01, հոդված 4639/ - 140000 դրամ
   2) «Փողոցների լուսավորում» /բաժին 06, խումբ 04, դաս 01, հոդված 4212/ - 5000000 դրամ

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 184-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

· Դիլիջանի քաղաքային համայնքի Գայի փողոցի թիվ 90 հասցեի առևտրի կենտրոնին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0217-0048 ծածկագրով հողում քաղ.Անգին Գրիգորյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես պարիսպ 15.02 քմ մակերեսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

· Դիլիջանի քաղաքային համայնքի Գայի փողոցի թիվ 90 հասցեի առևտրի կենտրոնին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0217-0048 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես պարիսպ 15.02 քմ մակերեսով – 39052 դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 185-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76/5 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 22.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. օգոստոսի 27-ի թիվ 366-Ա որոշմամբ, քաղ. Անիչկա Կուրղինյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 76/5 հասցեում ինքնակամ կառուցված 22.1քմ մակերեսով ավտոտնակի /հաշվարկված է արտաքին չափերով/ նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 20092013-11-0002/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 22.1քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 22.1քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Անիչկա Կուրղինյանին, համապատասխանաբար, 37570 դրամ և 42300 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 76/5 հասցեում գտնվող ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 22.1քմ հողամասը, համապատասխանաբար, 37570 դրամ և 42300 դրամ արժեքներով, քաղ. Անիչկա Կուրղինյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 186-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76/11 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 40.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. հուլիսի 22-ի թիվ 295-Ա որոշմամբ, քաղ. Եպրաքսյա Աղաջանյանի կողմից Մյասնիկյան փողոցի թիվ 76/11 հասցեում ինքնակամ կառուցված 40.8քմ մակերեսով ավտոտնակի /հաշվարկված է արտաքին չափերով/ նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփ. վկայական՝ թիվ 15102013-11-0020/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 40.8քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 40.8քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Եպրաքսյա Աղաջանյանին, համապատասխանաբար, 69360 դրամ և 78092 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Մյասնիկյան փողոցի թիվ 76/11 հասցեում գտնվող ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 40.8քմ հողամասը, համապատասխանաբար, 69360 դրամ և 78092 դրամ արժեքներով, քաղ. Եպրաքսյա Աղաջանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 187-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 82/3 ՀԱՍՑԵԻ 71.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Կարեն Սանթրոսյանը՝ Մյասնիկյան փողոցի թիվ 82 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող բնակելի տան 288.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Մյասնիկյան փողոցի թիվ 82/3 հասցեի 71.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 71.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Կարեն Սանթրոսյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/3 հասցեի 71.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 135894 դրամ արժեքով օտարել քաղ. Կարեն Սանթրոսյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/3 հասցեի 71.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 135894 դրամ արժեքով, քաղ. Կարեն Սանթրոսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 188-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 82/4 ՀԱՍՑԵԻ 43.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղաքացիներ Կարեն Մանթաշյանը և Սուսաննա Սարգսյանը՝ Օրջոնիկիձե փողոցի թիվ 1 հասցեի, իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող բնակելի տան 148.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Մյասնիկյան փողոցի թիվ 82/4 հասցեի 43.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 43.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան համասեփականատերեր Կարեն Մանթաշյանին և Սուսաննա Սարգսյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/4 հասցեի 73.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 82302 դրամ արժեքով օտարել քաղաքացիներ Կարեն Մանթաշյանին և Սուսաննա Սարգսյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 82/4 հասցեի 43.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 82302 դրամ արժեքով, քաղաքացիներ Կարեն Մանթաշյանին և Սուսաննա Սարգսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 189-Ա

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել ավագանուն Օրջոնիկիձե 65 շենքի թիվ 28 մեկ սենյականոց բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Օրջոնոկիձե փողոցի թիվ 65 շենքի թիվ 28, մեկ սենյականոց 43.63 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով,65445 դրամով (մեկ քառակուսու համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
7. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
8. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ
9. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2013թվականի N 190-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1670.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2013թ. հոկտեմբերի 25-ի թիվ 443-Ա որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1670.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1670.0քմ ընդհանուր մակերեսով, թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

2. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Աղյուսակ.
Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2013թ.
հոկտեմբերի 28-ի թիվ 190-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ										
Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 9/ՔԿ-13/	Մաքսիմ Գորկու 2/3	0316-0079	120.0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	25 000 դրամ	չկան
2	Լոտ 10/ՔԿ-13/	Կալինինի 4-րդ նրբ. 9/4	0110-0109	1,550.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	մինչև 2030թ. դեկտեմբերի 31-ը	50 000 դրամ	չկան

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Ա.Մարտիրոսյան*